Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ի ԳՐԱԿ

ԱԴԱ ՆԵԳՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՆԵՐ

ԹԱՐԳՄ. Ց. ՑԱԿՈՐԵԱՆ

1903
Տպարան Մ. Մարտիրոսեանցի Պուլ. փ. տ. № 12.

85
G - 45

85
Ն - 45

31 MAY 2006
19 NOV 2010

ԱԴԱ ՆԵԳՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմանեց

Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ա. ՊՐԱԿ

(Երկու աւտոտիպ պատկերով եւ կենսագրականով)

ԹԻՖԼԻՍ
Արագ. տպար. Մն. Մարտիրոսեանցի. Պուշկինեան փ. տ. № 12.
1903

10 JUL 2013

8135

Բայց դու, մեղսոտ կեանքի դաւակ—հաճոյքների սիրահար,
Հոս աշխատել, ապրել ես դուք—կեանքը օտար քեզ համար.
Դու այնպէս էլ փայփայւած ես, բաղդախնդիր ստահակ.
Կոլիր անարգ...քեզ համար ես պահած ունեմ լոկ զզւանք...

Աղա Նեգրի. տես բանաստ. «Աշխատե՞ղ ես դու»:

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Сентября 1903 г.

Գրադարան Հայաստանի ազգային

2626-2004

10 JUL 2013

Дозволено цен

Ada negu Garlanda

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ada negn Gartenlo

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԴԱ ՆԵԳՐԻ

(ՔՆՆԱԴՐՈՏԿՈՆ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

«Աշխատե՞լ ես դու»—հարցնում է Ադա Նեգրին իրենով յափշտակած երիտասարդին իր հրաշալի բանաստեղծութիւններից մէկի մէջ, և երբ իմանում է, որ սիրահար երիտասարդը զուրկէ աշխատելու ընդունակութիւնից, իսկոյն վռնդում է իր մօտից, համարելով նրան անարժան իր ջերմ սիրոյ և փոխադարձ զգացմունքների։ Այդ ոտանաւորի մէջ երևան է գալիս իտալուհի բանաստեղծուհու ամբողջ աշխարհայեացքը և ստեղծագործութեան հիմնական ոգին։ Նրա սէրը երբէք չէ հակւած դէպի այն հարուստ բուրժուայ դասակարգը, որի մեծամասնութիւնը միայն չոր-ցամաք եսական բարօրութեան մասին է մտածում, նրա սիրտը ամբողջովին պատկանում է աշխատող դասակարգին. և այդ սէրը շատ հեռու է կոպիտ, ստոր ընազդումների և թեթևամիտ անձնական կրքոտութեան արտայայտիչ լինելուց։

Ամեն ժամանակ և ամեն լուսաւորւած երկիրներում երևան են եկել յայտնի բանաստեղծուհիներ, բայց չէ

եղել մինչ այսօր դեռ մի այնպիսի օրինակ, որ մի որևէ Ջահիլ կին գրող հէնց իր առաջին երգը հնչեցուց ճանաչելի հասարակութեան և մամուլի կողմից որպէս նշանաւոր բանաստեղծուհի իր հայրենիքի. և սակայն այդ բաղդը վիճակւում է Ադա Նեգրուն—մի Ջահիլ իտալուհու, որը ծագումով հասարակ գիւղական դասակարգի զաւակ լինելով, կարիքի և վշտերի ուղեկցութեամբ հարթում է իր համար փառքի ուղին:

Ադա Նեգրին ծնել է Լօգիում 1870 թ. փետրվարի 8-ին: Լինելով գործարանային բանւորի դուստր և դեռ մանուկ հասակում զրկւելով միակ աշխատող հօրից, նա մեծացաւ և սկզբնական դաստիարակութիւնը ստացաւ մօր ղեկավարութեամբ, որը ստիպված էր նոյնպէս աշխատել մի բրդէ գործարանում, որով կարողանար և՛ ապրուստ հայթայթել և՛ կրթութիւն տալ իր միակ զաւակին: Խեղճ Ադան ամբողջ օրով սոված, մենակ նստած աղքատ խրճիթում, սպասում էր երեկոյեան մօր վերադարձին, որը պէտք է ուտելու բան բերէր իրեն համար: Տասնըչորս տարեկանից նա մտնում է Լօգիում իգական դպրոց, ուր պատրաստւում էին ժողովրդական և քաղաքային ուսումնարանների համար վարժուհիներ: 18 տարեկան նա արդէն ստանում է գիւղական վարժուհու պաշտօն Մոտտա-Վիսկոնտի կոչած աւանում, որը շրջապատված էր ճահիճներով և ճահճալի ագարակներով: Նախանձելի չէր և՛ այստեղ նրա կեանքը վարժուհու պաշտօնում. գտնւելով ամենասուղ նիւթական դրութեան մէջ նա ստիպված էր ստացած 20 լիրա *) ամսականով և ինքը ապրել և մօրը

*) Մի լիրան հաւասար է մօտ 50 կոպէկի:

ուղարկել ապրուստ, որը արդէն հիւանդ, ուժասպառ ընկած տանը, անկարող էր այլ ևս աշխատել:

Նկատելով վարժուհու վսեմ և ազնիւ կոչման պայծառ և մաքուր հաւատով բռնկված ապագայ գաղափարական գործունէութեան տենչով, Ադա Նեգրին իր վարժուհութեան պաշտօնավարութեան ընթացքում ևս ենթարկւեց անլուր հալածանքների, զրկանքների, բարոյական և հոգեկան շատ յուզմունքների: Այնպիսի մի նեխված մթնոլորտում, որպէս Մոտտա-Վիսկոնտին էր վարժուհիների բաղդը առհասարակ կապված էր գիւղի մեծերի քմահաճութիւնից և դատաստանից: Վատթար բնակարան, աննախանձելի ռոճիկ ուշ վճարումներով, մշտական քսու բամբասանք, լրտեսութիւններ, գռեհիկ վերաբերմունք, անտեղի վիրաւորանք, հալածանք, մշտական երկիւղ պաշտօնով երկրի մի ծայրից միւս ծայրը փոխելու, երբեմն սովածութիւն—ահա Իտալիայի վարժուհիների կեանքի ընդհանուր պատկերը, մի պատկեր, որը մեզ հայերիս նոյնպէս լաւ ծանօթ է ուսուցչական ասպարիզում գործողների վերաբերմամբ:

Քսաներեք տարեկան հասակում՝ այն է 1893 թ. Ադա Նեգրին լոյս է ընծայում իր բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն «Fatalita» (Ֆատալիտա=ճակատագիր) վերնագրով, որը թէ նիւթի նորութեան և թէ պատկերների թարմութեան կողմից միանգամայն ոչ միայն իտալացի գրագէտների, այլ և ամբողջ աշխարհի ուշադրութիւնն է գրաւում: Կարճ ժամանակամիջոցում այդ հեղինակին թարգմանում են դանազան լեզուներով և ահա խուլ հեռաւոր Մոտտա-Վիսկոնտիում ապրող աղքատ, մոռացած վարժուհին դառնում է ոչ միայն գրականագէտների այլև յայտնի կրիտիկոսների ուշադրութեան արժանի բանաստեղծուհի, որի ոչ միայն տաղանդով այլ և անձնաւո-

ությամբ նրանցից շատերը հետաքրքրելով, շտապում են այցելելու նրան։ Մոտտա-Վիսկոնտի այցելողը այդտեղ անպատճառ գտնում էր բանաստեղծուհուն մի աղքատ խրճիթում, ջարդված պատուհաններով, ուր ապակիներին փոխարինում էր թուղթը. մի փայտե հասարակ սեղան, մի քանի ծղոտի կոտրատած աթոռներ և մի փայտե դարակ, որը ծառայում էր գրքերի պահարանի տեղ—ահա ամբողջ կարասիքը, որ ունէր բանաստեղծուհին։ Այցելողին անմիջապէս գիմաւորում էր սաստիկ թխահեր, թուխ դէմքով, խելացի և մտորող աչքերով բանաստեղծուհին, որի նայուածքում աչքի է ընկնում այն տարօրինակ հրաշալի արտայայտությունը, որը յատուկ է բոլոր խորը մտածող, խորը զգացող և ուրեմն ուժեղ տանջող բնաւորություններին։ «Ֆատալիտան» լոյս տեսնելուց սակայն բաղդը սկսում է ժպտալ Ադա Նեգրուն. կիսաքաղց բանաստեղծվարժուհուն շուտով տեղափոխում են Միլան, առաջարկելով միաժամանակ բարձր իգական գպրոցում դասատուի (profesora) պաշտօն, որը ընդունում է անմիջապէս։ Այնուհետև նրան նշանակում են տարեկան 2.000 լիրա թոշակ, մի գումար, որը յատկացրած էր աղքատ, բայց տաղանդաւոր բանաստեղծուհիներին, որպէս նպաստ, և որը նրանից առաջ ստանում էր նոր վախճանուած կին գրող Ժանիննա Միլլին։

1896 թ. Ադա Նեգրին լոյս է ընծայում իր բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն «Tempeste» (Տէմպէստէ=փոթորիկներ) վերնագրով։ Փոթորիկը առհասարակ շատ հարազատ տարր է հանդիսանում երիտասարդ բանաստեղծուհու հոգեկան արտայայտություններին. իր առաջին ժողովածուի «Ֆատալիտայի» մէջ աչքի է ընկնում Ադա Նեգրու գլխաւորապէս մի նշանաւոր գիծը՝ այն

է հաւատը դէպի յաղթանակող, փրկարար և լուսաւոր ապագան, յաղթանակը արդարության։ Երկրորդ ժողովածուի—«Տէմպէստէի» մէջ հաւատարիմ մնալով իր սկզբնական իդէալին, նա երևան է գալիս մարտնչողի և պաշտպանի դերում հասարակ ժողովրդի հոգեկան և նիւթական շահերի, նա ներկայանում է մեզ—որպէս մարմնացած բողոք անպաշտպան և ճնշած աշխատող դասակարգի։ Այնուհետև Ադա Նեգրու տաղանդը հետզհետէ աճում, զարգանում է, նրա փառքը տարածուում է աւելի և աւելի հեռուն և Ադա Նեգրու անունը—որպէս ժողովրդական վշտերի, յոյզերի, ձգտումների և հոգսերի երգչուհու անուն—մտնում է հռչակաւոր գրական կօրիֆէյների շարքը։

Սակայն, անսպասելի ամենքի համար, Ադա Նեգրին ամուսնանում է, և աւաղ... ոչ թէ իր երգերում փառաբանած «ջլուտ բազուկներով և թաւ կրծքով հասարակ բանուորի», այլ մի հարուստ գործարանատէր ինժեների հետ, որից յետոյ առժամանակ սկսում է վայելել խաղաղ և փարթամ կեանքի հրապոյրները։ (Այս ամուսնությունը շատերը բացատրում են նրանով, թէ իբր Ադա Նեգրին կամեցաւ հարստի կին դառնալով, օգնել իր աչքի առաջ վխտացող աղքատ, թշուառ, օրւայ կարիքը դժուարությամբ հայթայթող դասակարգին)։

Այս է ահա, ընդհանուր գծերով վերցրած, Ադա Նեգրու կեանքը, մի կեանք՝ լի պարբերաբար շարունակող ընթացիկ վշտերով և դառնություններով, որի տեսությունը պիտի դայ լրացնելու նրա երգերում հնչող գաղափարների հիմնական ոգին։

Կարդալով Ադա Նեգրու բանաստեղծությունները, մենք տեսնում ենք, որ նրանք շնչում են անկեղծությամբ և առհասարակ կենդանի պատկերների ճշգրիտ նկարա-

գրութեամբ։ Նիւթը՝ ճնշած, տառապեալ, աշխատող դասակարգն է, նրանց վիճակը, նրանց հոգսերը, նրանց թշուառ և աղքատ կեանքի նկարագրութիւնը։ Այդ պատկերաւոր նկարագրութիւնների մէջ չկայ ոչ մի կեղծ, արհեստական շեշտ կամ փքուն ու չափազանցրած զգացմունք. նրանց մէջ, ինչպէս կարկաչահոս վտակ, ամեն ինչ հնչում է բնականօրէն, ինքաբերաբար, ուր արտացոլում է ջահիլ բանաստեղծուհու ջերմ, լուրջ բովանդակալից հոգին, մի հոգի՝ որը չափազանց շատ է տանջուել, չափազանց շատ է տոկացել, քամելով կեանքի մէջ պատահած բոլոր զրկանքների, բոլոր տառապանքների թոյնը և սակայն, որի հեռեւանքը եղել է այն, որ նա տաղանդաւոր կերպով կարողացել է բանաստեղծօրէն վերարտադրել այն ամենը, որոնք բղխում են անողոք կեանքի անմիջական իրականութիւնից։ Մի գիծ, որ գնահատելու է՝ այդ այն է, որ նրա շեշտը, նրա հոգեկան ծալքերի կազմը և երգերի ոգին մնացին անփոփոխ և անդուաճան նոյն իսկ այն ժամանակ, երբ նա նիւթապէս բոլորովին ապահովուած՝ բաղդաւոր էր համարում իրեն ընտանեկան յարկի տակ։

Ադա Նեգրու տաղանդը բոլորովին առնական թափ ու կորով ունի նոյն իսկ այնպիսի հարցերում, երբ այդ վերաբերում է սրտի հոգեբանութեան. նրա մուսան գլխաւորապէս զբաղուած է թոյլերի, նեղեալների և հալածուածների կեանքի բարօրութեան խնդրով, նրա սրտին մօտիկը, նրա lewit motiw-ը ամբոխն է և աշխատաւոր դասակարգի ցաւերը, խոհերը, ձգտումները և այդ ձգտումների իրագործման գաղափարը. որպէս հարազատ զաւակ տառապեալ ժողովրդի, ապրած նրանց մէջ, համակուած իր նմանների վշտերով, նա շատ լաւ է ճանաչում այդ ժողովրդի հոգսերի և կարիքների հոգեբանութիւնը, դրանից

առաջացած թշուառութեան պատճառները, և որպէս այդպիսին նրա բանաստեղծութիւնները կարդալիս մենք մի ըստէ մոռանում ենք, որ յայտնի բանաստեղծուհին միայն Իտալիայի տառապած ամբոխի վշտեր ու հոգսերն է երգում, մոռանում ենք անգամ, որ դրանց հեղինակը մի օտարուհի է, և մոռանում ենք, գլխաւորապէս, գիտէք ինչու—որովհետև այդ զգացմունքների արտայայտութիւնը հանրամարդկային է։

Իրականութիւնից վերցրած նրա պատկերաւոր պօէզիան լեզուի կողմից ևս հնչում է շատ թովիչ և մի առանձին գրաւիչ, փաղաքշող ներդաշնակութեամբ, մանաւանդ երբ խօսում է աղքատութեան, կարիքի և աշխատանքի դաղափարի մասին։ Միրոյ զգացմունքների արտայայտութեան մէջ ևս նա չափազանց կրքոտ, անզուսպ և բուռն, անդիմադրելի է։

Ադա Նեգրին մինչև 22 տարեկան հասակը ապրել է ծայրայեղ աղքատութեան մէջ, բայց երբէք չէ յուսահատուել, երբէք չէ խոնարհել իր վիճակի առաջ, նրա հաւատը՝ թէ դէպի իր անձը և թէ դէպի մօտ ապագայի արդարութեան յաղթանակը առհասարակ, նրան ստիպում էր, որպէս ինքն է ասում իր բանաստեղծութիւններից մէկի մէջ, «հպարտութեամբ և արհամարանքով տանել արտարին կեանքի պատճառած բոլոր զրկանքները, որոնք առաջանում էին անձուկկենցաղից», նա լաւ գիտէր, որ համարեա միշտ այդպէս է լինում բոլոր իսկական տաղանդների վիճակը. նա համոզուած է, որ իր կեանքը լինելու է մի անվերջ շարք վշտի, դառնութեան և տառապանքների, սակայն երբէք չի զիջի, չի խոնարհի ոչ մի խարուսիկ հանգամանքի առաջ։ Ցանջանքի բացակայութիւնը Ադա Նեգրու հասկացողութեամբ նշան է մեռելութեան, բուրժուազական ինքնարաւականութեան։

Մի տեղ նա ասում է։

«Իմ հնչուն երգը սաւառնում է թշւառ, դալկացած ամբոխի վրայով, որպէս վիրաւոր արծիւ, որը ձգտում է դէպի լեռների սառցարանները». սակայն այդ արծիւը արնաքամ չի լինում, չի մեռնում, այլ ընդհակառակը նրա կոչը հնչում է աւելի յաղթական շեշտով, ներշնչելով թարմութիւն, արիութիւն և եռանդ այն անձանց մէջ, որոնք արդէն վհատած, կորցրել են այդ յատկութիւնները։ Մի այլ տեղ նա փառաբանում է «թաւամազ երկաթի կուրծքը բանւորի և ջլուտ բազուկները աշխատաւորի», որոնց շնորհիւ ստեղծւում է ժամանակակից կուլտուրան։ Նա ողջունում է աշխարհիս բոլոր անկիւններում ապրող, պրոլետարեայ—աշխատող դասակարգը, այդ հսկայ ընտանիքը, որին մի օր վերջապէս պիտի ջերմացնէ այն յաւիտենական արեգակը, որին անւանում է «ասատուածային անմահ, պարզ հայեացք»։ Մի ուրիշ տեղ էլ իդէալականացնելով աշխատանքի գաղափարը, ասում է՝ «Աշխատեցէք և մի վհատէք, մի ընկճուէք երբէք ձեր վիճակի ծանրութիւնից. այդ վիճակի ստեղծողը, լաւ թէ վատ, ինքներդ էք լինելու. պահպանեցէք սրտի մաքրութիւնը և բազուկների ամրութիւնը, եղէք անյողդողդ և վճռական ձեր ձգտումների մէջ. ներշնչեցէք հաստատ կամքի զօրութիւնով. հաւատացէք և սիրեցէք, որովհետև սէրն է հովանաւորելու ձեր ուժերը, մանաւանդ դառնութեան ժամին»։

Այս եռանդուն և թարմութիւն ներշնչող խօսքերը, ինչպէս այդ նկատում են մի քանի կրիտիկոսներ, բոլորովին հեռու են դասակարգային փոխադարձ ատելութեան զգացմունքներ գրգռելուց, ընդհակառակը նրա միշտ եռանդուն, խայթող ու թարմացնող տաղանդի առաջ մի դեր—քնական հմայքով խոնարհւել է նոյն իսկ բթամիտ, պարտացած և ինքնանբաւական բուրժուան, որը հետաքրքրութեամբ կարդալով Ադա Նեգրուն, ազդւել է նրա հեղինակաւոր խօսքերի ճշմարտութիւնից։ Իր անդրանիկ երգը, որը գժւար է ենթարկւում հայկական տաղաչափութեան, սկսւում է այսպէս։

«Օ, կուշտ, մեղկ աշխարհ, աշխարհ բթամիտ
«բուրժուաների, ապրած ու սնուած կեղտ ու տիղմի
«մէջ, լիքը ճարպալի մեծատուններով և ջահիլ, լպիրշ
«կոկոտկաններով—այդ սակաւարիւն թշւառ կանանցով,
«որոնք գնում են Աստծոյ տաճար, լոկ նրա համար,
«որ այնտեղ տեսնեն ժամադիր եղած սիրականներին. դու
«ստոր ու մեղկ, խաբեբայ աշխարհ, ճգնում ես խլել
«ինձնից լուսատու վէս իդէալը, ա՜յ վախկոտ ստրուկ,
«ուզում ես ջարդել ազատ թևերս ձգտող ու սովոր ազատ
«եթերին. տես. դու օձի պէս փշշում ես, սողում իմ ոտնե-
«րի տակ, իսկ ես թռչում եմ, սաւառնում օդում ազատ
«ոգու պէս. դու անմտօրէն օրդ ես մաշում բամբասանքնե-
«րի ու ստելու մէջ, իսկ ես ապրում եմ և կեանքը երգում,
«փառաբանելով կեանքի իմաստը. դու զբաղւած ես քսու,
«անամօթ զրպարտութիւնով, մարդկանց խարելով, իսկ ես
«քեզ ատում, արհամարում եմ ու փախչում քեզնից խորին
«զզւանքով։ Երկնակամարից ահա ժպտում է ինձ պօէզիայի
«ոսկէ արևը իրա հմայիչ գոյն-գոյն ցնծուղով. մինչ դու
«սողում ես ցեխ ու տիղմի մէջ գլուխդ կախած. աչքերս
«յառած փայլուն աստղերին ես ընթանում եմ առաջ և
«առաջ, անդէն, միայնակ ու մաքառում եմ ճակատագրիս
«դէմ. և քանի որ դու էլ կատաղօրէն հալածում ես ինձ,
«այնքան ուժով է կրծքիս ժայթքում մարգարէական սի-
«րոյ պատգամը։ Ընթացիր ուրեմն, կուշտ, թերահաւատ
«մեղսալի աշխարհ, մութ, կասկածելի մոլոր ուղիովդ, այդ-

«պէս կդիմես դէպ խաւար ու մահ... Դիզիր ոսկիներ, մեղկ «հաճոյքներդ շոյելու համար. իմ սուր, անողոք շեշտակի «երգի ծանր հարուածով կապտակահարեմ ես քո երեսդ»: Այս երգը լինելով անդրանիկը, սրանով էլ որոշուեց Ադա Նեգրու ոգին, ժանրը և աշխարհաեացքը. այս երգն էր որ դարձաւ հիմք նրա ապագայ գրական գործունէութեան:

Ադա Նեգրու ծնուելու տեղը իսկ որ Իտալիան պիտի լինէր, մի երկիր, որ յանձին նրա գտաւ իր ժամանակակից իսկական ցաւերի, հոգսերի արտայայտչին՝ իր տառապանքների հարազատ երգչուհուն: Մի հագամանք, որ բարձրացնում է Ադա Նեգրուն թէ իր հայրենակիցների և թէ օտարների աչքում մինչև աշխարհոչակ կոչուելը, այդ այն է որ նա այն, ինչ.ասելու ունէր, ասաց ժամանակին և այն էլ շատ տաղանդաւոր կերպով. ամբոխի, աշխատող դասակարգի վէրքերը հասունացել, ցաւերի վշտերի բաժակը լցուել էր, բայց արտայայտող, բժշկող չունէր և յանձին Ադա Նեգրու էլ գտնուեցաւ այդ ամենի արտայայտիչը:

Չնայած որ ծնուելու օրից Ադա Նեգրին բացի աղքատութիւնից, հալածանքներից և դառն զրկանքներից ոչ մի մխիթարութիւն չէր տեսել, այնուամենայնիւ նա իր երգերում միշտ մնաց լաւատես (ortimiste) և անուղղելի իդէալիստ. սկզբում ճիշտ է նրա երգը հնչում է թախծալի, տխուր, մահուան քայլերգի պէս, սակայն հետզհետէ նա փոխուում է կենսուրախութիւն և արիութիւն ներշնչող բնութեան հետ ներդաշնակուած սքանչելի ակկորդների:

Նրա կարծիքով հեռու չէ այն ապագան, երբ աշխարհը իրենից կներկայացնի ընդհանուր հանրամարդկային խաղաղութիւն և անպայման արդարութիւն: Չեն լինի եղբայրասպան պատերազմներ, որոնք բանական մարդուն հասցնում են անբանանասնական դրութիւնից էլ աւել ստոր մի դրութեան. կվերանայ աշխարհիս երեսից անգրագիտութիւնը և անտարբերութիւնը անպաշտպան և ճնշուած աշխատող դասակարգի վերաբերմամբ:

Ահա այդ կլինի վաղուց մեզ խոստացած և այսքան երկար սպասուած մարդկային ընդհանուր բաղդաւորութեան իդէալը *):

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

---

*) Այս քննադատական—կենսագրական ակնարկը կազմելիս օգտուել ենք՝

1) „Русская мысль“ ամսագրի մի քննադատութիւնից:

2) А. Н. Е-вч-ի հրատարակած „Борьба и Любовь“ հրատարակութիւնից Ադա Նեգրու մասին:

3) В. Шулятиковъ, Стихотв. Ада Негри գրքոյկից: Այս վերջին երկու հրատարակութիւններից էլ հենց մենք օգտուել ենք, մեր թարգմանութիւնները համեմատելով բնագրի հետ մի իտալացի պարոնի աջակցութեամբ:

Ե. ԹԱՐԴ.

ԸՆԹԱՑԵ՞Լ ԵՍ ԴՈՒ...

Ցավչտակված դու ինձանով, կրքոտ սիրով տոգորված
Ջերմ համբույրներ, գրկախառնումն սպասում ես փոխադարձ,
Փափագում ես գուրգուրելու, տիրանալու իմ սրտին,
Կաքստում ես թարմ, կուսական մատաղ սիրոյ թովչանքին։

Բայց ասա՛ ինձ. ծանո՞թ ես դու վշտերի հետ դարաւոր,
Մաքառե՞լ ես հերոսի պէս վիճակիդ դէմ բռնաւոր,
Եւ որպէս մի վախկոտ սարուկ չե՞ս վհատել նեղ ժամին,
Չե՞ս խուսափել հաս՝ վտանգից, որ զոհ չտաս դու կեանքին։

Անդուլ գործից առաջացած ցոյց տուր ձեռքիդ կոշտերը,
Ես կիմանամ՝ սիրում ե՞ս դու արդեօք ազնիւ աշխատանք,
Ասա՛ գոնէ, տանջվե՞լ ես դու մինչև սրտիդ խորքերը
Չարքաշ, թշուառ մարդկանց համար—և ի՞նչ է քո նպատակ։

Դու լռո՞ւմ ես... հեռո՛ւ, ուրեմն, իմ ջերմ սիրուց կանացի,
Աշխարհային վայելքներդ, գնա՛, կրկին նորոգիր.
Սիրիր ընկած, ժպիրհ կանանց առանց խղճի խայթոցի,
Գծուծ ոսկին ինձ տիրանալ անկարող է, իմացիր։

Օ՜, եթէ ես, երբ և իցէ, քո ձեռքերը տեսնէի
Բերուած, հիւծուած, արիւնլայ—այդ վիճակից ինքնագոհ,
Թէ ինձանից, որպէս պարզև, փոխարէն լուռ տանջանքի
Պահանջէիր սէր, փայփայանք, պահանջէիր անգամ զոհ,

Թէ տեսնէի, որ հեղնանքով դու առում ես ժանգ ոսկին,
Սուրը վաստակով ոգևորւած վերադառնում այլ կեանքի,
Տեսնէի քեզ վերածնւած՝ կամենում ես մաքառել
Վիճակիդ դէմ և նոր կեանքի արշալոյսը ողջունել,

Այն ժամանակ ես քեզանով հպարտացած, քաջարի
Քո զրկանքով, տառապանքով իմ կոյս կուրծքը կայրէի,
Կը ջանայի թեթևացնել վիշտ ու հոգսդ վիթխարի,
Եւ հոգեմաշ դարդիդ համար քեզ իմ կեանքը կտայի։

Բայց դու, մեղսոտ կեանքի զաւակ—հաճոյքների սիրահար,
Ձես աշխատել, ապրել ես դուր—կեանքը օտար քեզ համար.
Դու այնպէս էլ փայփայւած ես, բաղդախնդիր ստահակ.
Կորիր անարգ...քեզ համար ես պահած ունեմ լոկ զզւանք...

———•———

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՄԲՈՅՐ

Սիրում եմ ես ջլուտ, ուժեղ բազուկները բանւորի,
Եւ յաղթանդամ վէս հասակը, ալ գոյնը թուխ այտերի,
Ձնաշխարհիկ երջանկութեան յոյզ է նա ինձ խոստանում,
Սէրը նրա կրքոտ, անզուսպ հուր-հոսանքի նմանւում։

Նա կուրծք ունի—ժայռից ամուր, անմատչելի ախտերին,
Իր անաղարտ սրտի համար սիրելի է շատերին.
Ձունի ոսկի, բարձր կոչում և ոչ հաղին թանգ շորեր,
Ինչու՞ ապա ցանկանում ենք նրան մերը համարել.

Որովհետև այդ թաւ կրծքում անզուսպ կրքով առնական
Սէրն է շնչում, ապրում, յուզւում, որպէս վայրի մի գազան.
Նրա գրկում կմոռացւի և՛ բասրանքը խուժանին,
Համեստութիւնն այրւած կրքից չի կարմրիլ այդ ժամին։

———•———

2626-2004
Հայաստանի Ազգային գրադարան

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Սընաբիս մօտ լուռ գիշերին յայտնուեց մի չքնաղ կին,
Սրած դաշոյն, շիկնած ածուխ ասես աչքերը լինէին.
—«Դուք մարդիկդ ինձ կնքեցիք «վիշտ,տառապանք» անունով,
Այդպէս են ինձ այժմ կոչում—ասաց կինը ժպտալով։

Ես սարսեցի...—Հանգստացիր, խեղճ իմ զաւակ փոքրոգի,
Այսօրւանից իմն ես միակ, չեմ զիջանիլ ոչ ոքի.
Յետքէդ կգամ մինչ գերեզման խինդ ու լացդ կիսելու,
—«Ա՜խ, հեռացիր»... բայց չէ ուզում նա աղերսս լսելու։

Եւ կանգնած է արձանի պէս դժբաղդութեան թագուհին.
—«Բաղդդ այնտեղ երկնքումն է լոկ սահմանուած, թշուառ կին,
Նոճիների մեռած կոկոն, զրկանքների դու դստրիկ,
Բաղդդ այնտեղ է սահմանուած, շիրմի դալուկ որբ ծաղիկ»։

Ես արթնացայ...—«Ա՜խ, ես կարօտ դեռ իմ ջահիլ հասակում,
Կուզէի որ բաղդը բերէր երջանիկ օր այս կեանքում,
Կուզէի որ կուրծքս ուռչէր ցնորալից յոյզերով,
Ապրէր, շնչէր, ոգևորուէր ջերմ, կենսուրախ, վառ սիրով...

Հեռո՜ւ, հեռո՜ւ դու ինձանից, շիրիմների մենաւոր,
Եւ լսում եմ կրկին հուժկու նրա ձայնը ահաւոր.

—«Նա է փառքի լոկ արժանի,
Որը խոցւած սրտի խորքում բիւր վշտերի սպի ունի,
Յաղթութիւնը մարտի դաշտում տանում է միշտ քաջ զինուորը,
Տառապանքն է որ սրբում է մարդի աղնիւ ճանապարհը»։
—«Կա՛ց, ով ստւեր, էլ մի գնա,
Ինձ ուղեկից մինչ մահ մնա»։

ՈՂՋՈՒՅՆ ՁԵՌՔ ԿԸՐԻՔ

Չգիտեմ՝ ով է դռնակս բաղխում...
—Այդ դու՞ ես եկել, ա՛յ դաժան կարիք,
Գերեզմանների բնակչիդ ողջույն,
Հպարտ իմ հոգուն գալդ է բարիք.
Եւ քեզ ո՛ կմախք, մահուան բոթարեր,
Դիմաւորում եմ ահա անտարբեր։

Բայց ինչո՞ւ լուռ ես, բռնակալ ոգի,
Է՞ր չես շտապում մտնել իմ խրճիթ,
Դէ՛, չուտ, թեւերս ջարդիր, անհոգի,
Ցցիր մագիլներդ սրտիս մէջ վճիտ,
Կանգնիր խեղճ մօրս մահճի գլխատակ
Որպէս մահարեր հոգէառ հրեշտակ։

Դու տատանւում ես կմախք այլայլուած,
Թէ՞ խնայում ես գարունը կեանքիս.
Օ՜, անհոգ կացիր, չեմ ընկնիլ յաղթուած՝
Կեանքի գոռ մարտում ծաղիկ հասակիս.
Տարերքների մէջ, տանջանքի բովում
Կամրանայ հոգիս, կ'փթթի գարուն։

Իմ մրրկածուփ շարատանջ կրծքում
Սրտի յոյզերը դեռ անհանգչելի,
Երկնից անսահման, անհուն բարձունքում
Մաքիս թռիչքն է անհասանելի.
Որքան էլ նայես խիստ, մռայլ դէմքով,
Ես պիտի շնչեմ իմ սիրած կեանքով։

Տեսնում ես դաշտը ծաղկունքով զուգուած՝
Ողջ բնութիւնն է եռում, բորբոքւում.
Լսում ես երգը արտուտի յուզուած՝
Արձագանք տալիս եթերը—բարձունքում.
Ողջը շնչում է վառ յուսոյ արև,
Ողջը թեւ առած ձգտում է վերև։

Օ՜, դաժան կարիք, վհուկ այլանդակ՝
Սև ծածկոցի տակ—քեզնից չեմ սարսում,
Տանջուած, բորբոքուած անյաղթ կրծքիս տակ
Խեղճ ժողովրդի արիւնն է հոսում.
Հեռու ինձանից վախ ու շղթաներ,
Հոգիս ճախրում է դէպի ջինջ եթեր։

Իմ կէտ նպատակ՝ յաղթական, իշխող
Աշխատանքն է վեհ, ցնորքը յուզող,
Հիասքանչ նւագն դիւթիչ երգերի,
Եւ շոյումները գարնան թովչալի,
Մաքուր, անաղարտ, անհուն եթերը,
Ողջը աստղերի, ծաղկանց հիւթերը։

Զքաջիր ուրեմն, եղկելի սու�,
Զքնաղ բնութեան պայծառ ցոլքերում.
Կեանքն արթնացաւ, շուրջ մանուշակներ
Տատասկների մէջ ծաղկում են, բուրում,
Դու կապանքներդ ահա խորտակեմ,
Որ նորոդ կեանքի գարունը երգեմ։

ԴԺԲԱՂԴԸ

Ողբում է ծովը... և արցունքները այլիքով եռուն
Միմեանց ճնշելով ժայռոտ ափերին անքում են հեռում.
Եւ կամարը խիստ, յօնքերը կիտած, համակուած վշտով,
Կապարեայ ամպերն իրար խառնելով լուռ ու անտարբեր
Մռայլ բարձունքից շեշտում է դէպ ցած հրեղէն շանթեր։

Ողբում է ծովը... և իր վշտալի կրծքին երերուն
Մի ջահիլ, սիրուն դիակ է տանում—ասես օրօրում...
Դիակն է տանում այն դժբաղդ չքնաղ ջրահեղձ կոյսի,
Որը հայցելով անողոք բաղդից կեանքի փրկութիւն
Գտել էր նրան մուրթ, կորստաբեր ծովի անդունդում...

Ողբում է ծովը... և նրա անդուսպ հեկեկանքներում
Լսւում է հառաչ, արցունք բռնութեան—կրած վշտերու.
Լսւում է կեանքի սիրոյ ցնորումն—ջերմ համբոյրների...
Եւ թւում է թէ՝ ժայթքում է բողոք կոյսի ջերմ կրծքից
Ե՛ւ անէծք նրան, որը անարգեց իր սէրն անբիծ...

ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ

Ցափրած իր բոյրից նիրհում է այգին
Խաղաղ գիշերին,
Սիրահարի պէս գրկել է նրան
Սիրոյ գիշերին.
Բայց չունի հանգիստ քամու երկիւղից
Այգին քնէառ,
Եւ ծառ ու ծաղկունք ցողում են արցունք
Խաւարում մռայլ։
Շարժում է քամին իր դառն շնչով
Քնասթավ այգուն,
Ծառի ճիւղերը ահա դարթնելով
Ցուզուում են, տնքում.
Նրանց յուզմունքին երկ՚ձայնում են
Մատաղ ծաղիկները,
Լսում է մէգը—դատապարտում է
Նենգ մարդկանց գործքեր.
Ողբում է մէգը հիւանդոտ խղճի,
Նեղեալի համար,
Ցուսահատ կուում թառամած, խեղդուած
Իդէալի համար։

ԳԱՆԱԿԻ ՏԱԿ

Գիտութեանը ընկաւ բաժին մի չքնաղ մարմին,
Եւ անտարբեր վիրաբոյժը սուր դանակ ձեռքին
Կտրատում է ու յօշոտում մարմինս սիրուն,
Եւ անողոք պատռում կուրծքս ու թափում արիւն։

Եւ մատուռը մեռեալների մռայլ է ու նեղ,
Պառկել կոյսին մենակ ու մերկ ամօթ չէ այնտեղ.
Գիտուն, նայիր, տես զրոշմը այն տանջանքների,
Որը անջինջ դեռ ապրում է իմ փակ աչքերին։

Նա կասի որ մանուկ օրից բաղդից հալածուած՝
Փողոցային զաղիր կեանքի ախտերով սնուած՝
Մեծացայ ես գիշերները բաց երկնքի տակ,
Թափառելով որպէս ալիք ազատ համարձակ։

Ճաշակեցի մենակ կեանքի վիշտ ու տառապանք
Եւ յանցաւոր գիշերների թունաւոր հեշտանք,
Օ՛, հասկացայ օտար մարդկանց ստոր նպատակ,
Կեղծ ու պատիր կարեկցութիւնն սև դիմակի տակ։

Ու վերջապէս քամած կեանքի դառն բաժակը՝
Հիւանդանոց ձգեցին ինձ... թուում էր, աւաղ,
Գոնէ այստեղ հանգիստ կառնի տանջած իմ կեանքը,
Իզո՞ւր պատրանք... մահը կորզեց հասակս մատաղ։

Եւ մեռայ ես այստեղ, որպէս թափառաշրջիկ,
Որպէս պառաւ ու արտաքսուած մի գամփռ անպէտք.
Օ՛, խորթ բաղդի դու խորթ զաւակ, շրջամոլ աղջիկ,
Հեղաւ մէկը՝ մահդ ողբաց արցունքով անկեղծ։

Նայիր, գիտուն, այս խուրձ կապած փարթամ մազերին,
Հեղաւ մի օր, որ կուսական շքեղ հիւսերին
Մէկն ու մէկը անկեղծ սիրով համբոյր տաց, շոյէր,
Սիրոյ անմիտ գիշերներին զրկէր, փայփայէր։

Այժմ թէև անշնչացած, բայց, ճեղքուած կրծքում
Խորաղնին հայեածքդ սուր թող դանի իսկոյն
Հետքը կրած տառապանքիս, որով չար մարդիկ
Մահուան վճիռ ինձ կարդացին մատաղ հասակում։

Եւ պոկելով տանջած սիրտս անյողդողդ ձեռքով,
Գիտութիւնը թող վերլուծի հոյակապ խելքով,
Թափանցելով խորհրդաւոր գաղտնիքներիս մէջ՝
Աշխարհ հանի թող գաղտնիքը վշտերիս անվերջ։

Օ՛, ասա՛ ինձ, գիտե՞ս արդեօք, որ մերկ դիակով
Մինչև այսօր ապրել եմ ես դերթ ոգի չքնաղ.
Զլինի՞ թէ սիրուն դէմքս համբ տանջանքով
Յուզի անվերջ ու փոթորկի քո սիրտը խաղաղ։

Եւ ամեն օր յիշեցնի քեզ, որ կեանքս մատաղ
Սառած, անշարժ նայուածքիս մէջ թառամեց շատ վաղ,
Գուցէ յիշես, ինչպէս թոյնը բիւր անէծքների
Դեռ ապրում է ամուր սեղմած իմ շրթունքներին։

———

ՀԱՆԴԻՍՏ ՎԱՍՏԱԿԱՐՈՐԻՆ

Մթնեց օրը աշխատանքի, տանջանքի,
Տեղի տալով կախարդուհի գիշերին,
Նա բերում է մոռացումն զրկանքի,
Ստորացման, որ կրել եմ այդ օրին։

Մէն սենեակիս կանթեղը վառ, ես ուրախ
Արդէն հեռու այն դժոխքի աղմուկից,
Որ կոչւում է մայրաքաղաք—և խաղաղ
Սուրբ պատկերն է փաղաքշանքով նայում ինձ։

Եւ գիշերը սև քող ձգած իր դէմքին՝
Հանգստութիւն է ներշնչում ամենքին,
Ծանր հոգսը, տառապանքը մոռացած՝
Եւ նիրհում եմ ցնորքների մէջ սուզուած...

Օ՛, ինչ անդորը հանգստութիւն է տիրել
Ցոգնած սրտիս, ինչպէս գոհ եմ վիճակից,
Աղքատական պալատի հետ չեմ փոխել
Իմ խրճիթը. նա ջերմ է լոյս՝ արեգից։

Այստեղ միայն ճանաչեցի, զգացի
Աշխատանքի, քաղցը կեանքի խորհուրդը,
Այստեղ մարդկանց բռնութիւնը տեսցի.
Օ՛, թանգ է ինձ տանս ամեն մի զարդը։

Մթնեց օրը աշխատանքի, տանջանքի,
Տեղի տալով կախարդուհի գիշերին,
Նա բերում է մոռացումն զրկանքի,
Ստորացման, որ կրեցի այդ օրին։

ՄԱՂԹԱՆՔ

Սառը նկուղի խոնաւ անկիւնում խոտերի վրայ
Պառկած է մենակ որբ մանկահասակ հիւանդ մի տղայ.
Տուր ապաքինում նրա տանջանքին, խնամող Աստուած,
Բանւոր մանուկ է նա անօգնական, ողջից մոռացած։

Հրեշտակի թեով առաքիր նրան տեսիլք ցնորալից,
Այդպէս փարատի գոնէ մօտալուտ մահուան տագնապից.
Նա օր չ'տեսաւ... վիճակը խեղճի զրկանք էր անվերջ,
Ծեծ ու հայհոյանք գործարանային խուլ ժխորի մէջ։

Եւ դժոխային խիստ աշխատանքից ուժասպառ, տարտամ
Որպէս հնձած հասկ օրօրւեց—ընկաւ մեքենայի տակ...
Գիտեմ, Արարիչ, առանց սուրբ կամքիդ և մաղն անգամ
Չի պակսիլ մարդուց և սակայն որբին մի թող անխնամ։

Սփոփիր նրա կսկիծն ու լացը... Հրեշտակը մահուան
Թող իր ջերմ սիրով, քաղցր զրոյցով փաղաքշի որբին.
Ե'ւ կեանքն անհամբոյր և' քաղցը տանջող նրանից անբաժան
Թող անհետանան խղճուկի մաքից մահուան րոպէին։

ԹՐՌՄՄԱԾ ՀԱՄԲՈՅՐ

Վաղագարուն թոր ու թացին
Մանուշակը ցող բռնեց,
Ցուրտը տեց... արևազուրկ
Մանուշակը թառամեց...

Ե'ւ իմ երբեմն շրթունքներին
Սիրոյ համբոյրն էր վառում,
Դու հեռացար, ո՜հ սիրազուրկ
Կեանքս է այժմ թառամում...

ՓՈՂՈՑԻ ՏՂԱՆ

Տեսնում եմ յաճախ, ինչպէս մարդաշատ լայն փողոցներով
Թրև է գալիս փողոցի տղան ամբողջ օրերով,
Սոված, կիսամերկ, արհամարհելով իր սև վիճակը,
Չէ խորշում կեղտից, ոչ գողութիւնից մանուկ հասակը։

Ո՛վ գիտէ, գուցէ նրա ծնողներն ընկած են բանտում,
Կամ գործարանում քրտինք թափելով հաց են աշխատում,
Միակ պարապը ինքն է որ կայ—ապրում է ազատ
Փողոցի տղան, որպէս ամբոխի որդին հարազատ։

Քարերը է նետում անցուդարձ անող անասուններին,
Նրանց տանջանքով հրճւում է սրտանց մանուկ վայրենին.
Ու մի վայրկեանում սոսկաց իմ հոգին, երբ միտս բերի
Սրա պէս անխնամ մանկանց վիճակը—անթիւ որբերի։

Ես խղճում էի փողոցը նետուած, անխնամ մանկանց.
Արդե՞օք, իմանամ, թշուառ մանուկներ, փողոցում ծնուած,
Ի՞նչ է սպասում ձեզ ապագայում, որպիսի՞ վիճակ,
Աշխատող մեղմ, թէ՞ բռռ կմնաք, երբ առնէք հասակ։

Զարատանջ, հիւծող բուժարաններն են գուցէ ձեզ կանչում,
Կամ տաժանակիր սև աշխատանքը հեռից սպասում...
Ա՜խ, ինչպէս ցաւում, ինչպէս տանջւում է հոգիս ձեզ համար,
Ա՜յ անտուն, անտէր մանուկ թռչնիկներ, փոքրիկներ կայտառ։

Ես արտասուում եմ, մաշւում եմ անվերջ ձեր դառն վիճակով,
Մօր պէս փայփայել, տաքացնել ուզում ձեզ իմ ջերմ կրծքով.
Ա՛խ, ես էլ ձեզ պէս մանուկ հասակում տարել եմ զրկանք,
Լսել անէծքը անգութ վիճակի, կրել բիւր տանջանք...

———•———

ԱՆԻՒ ՏԸԿ

Օ՜, անմեղ տեղից քանի զուր տանջանք
Բերում ես դու մեզ, անողոք սև կեանք,
Չէ, էլ չենք տեսնիլ մըխիթարութիւն,
Չէ, չի պակսելու մեզ թշուառութիւն։

Տեսայ ես մի օր—թեր աղջկան
Ջարդել էր, կախել արագ մեքենան.
Ասես՝ թէ կսկիծ, խուլ հառաչանքներ,
Եւ արիւնալից սև տեսարաններ

Էին պահանջում մեռած ոգիներ.
Օ՜, երանի թէ իմանաք դուք էլ,
Քանի տառապանք, վշտերը անհամար
Տանում է մարդը սև հացի համար։

Խեղճ հաշմանդամը այժմ ի՞նչ անի,
Կարիքի հոգսը արդեօք կտանի՞...
Հարուստը նրան հօ չի մօտ գալու,
Այս կրակ ցաւին լուծումն տալու։

Աղնիւ աղջիկը, ո՞վ Աստուած բարի,
Էլ ինց աշխատի առանց ձեռների,
Եւ այն մի օտար, անյայտ աշխարհում,
Որը խեղդւում է հեկեկանքներում։

Ու պիտի մուրայ..., ուրիշ ելք չկայ,
Խեղճ հաշմանդամը անտուն ու անտէր,
Եւ այս վիճակւեց այն որբ աղջկան,
Որը ուխտել էր ցմահ աշխատել։

———•———

ՍԻՐՈՅ ԱՆԻԾՔ

Դժբաղդութեան դուստր եմ ես. սիրոյ նեռը թունալից
Չի յանդգնի խոցել ինձ.
Ջերմ, խանդավառ սիրոյ շունչը ես կ'խեղդեմ կրծքիս տակ,
Որ չտուժեմ նրանից։
Դժբաղդութեան դուստր եմ ես. և ծնունդը արգանդիս
Արեան ցօղէ՝ դժբաղդիս...
Առանց կրակ կայրի նրան, կհալցնի աչերը
Դեռ լոյս չընկած մանուկիս։
Դժբաղդութեան դուստր եմ ես. արեան յոյզը հեշտալից
Սպառնանք է շնչում ինձ...
Լռիր, սիրտ իմ, սէրը թոյն է ունախատինք քեզ համար՝
Վատթար իժի շփումից։
Դժբաղդութեան դուստր եմ ես. սէրը մաշի խղճուկիս՝
Աշխատանքի սարուկիս.
Եւ թող սառչի ջերմ արիւնս առանց սիրոյ, կարիքը
Թող ջերմանայ իմ կրծքիս։
Դժբաղդութեան դուստր եմ ես. սէրը կատէ գերեզման,
Հաւատարիմ չէ նորան,
Թող ուրեմն նեխուի հողում մնացորդը ոյժերիս՝
Փոթորկալի գարունքիս։

———•———

ԹԻԹԵՂԸԴՈՐԾԻ ՄԵՀԸ

Հսկայ շինութեան բարձր տանիքին
Վաղ առաւօտից նա աշխատում էր,
Կարիքն ու հոգսը իր ընտանիքի
Նրա եռանդը կրկնապատկում էր։

Երկար աշխատեց... և արեգակը
Մօտ էր կէսօրին՝ ճաշելու ժամին.
«Զտապիր, ճաշի է ժամանակը»,
Ասաց նա ուրախ իր հարևանին։

Ցանկարծ սայթաքեց բարձր տանիքից,
Տապալուեց գետին ջարդուած դիակով,
Մարդիկ սարսափած այս դժբաղդ դէպքից,
Կանգնել—դիտում են ապուշ հայեացքով։

Նոքա համակուած կեղծ ցաւակցութեամբ,
Հետաքրքրքրուած հոսող արիւնով,
«Ափսոս» են ասում անամօթութեամբ
Ու անցնում, դէպքը մոռացման տալով։

Եւ միայն կինը ու քաղցած որդիք
Չեն մոռանալու աշխատաւորին,
Թոյն—ատելութեամբ պիտի անիծեն
Բիրտ ու քարացած խիղճը մարդկային։

———•———

ՋՐԱՀԵՂՁ ԿՈՒՍԻՆ

Ալիքներից էլ աւելի սառն է մարդկանց սիրտ,
Ալիքներից՝ որոնց գրկում գտար դու հանգիստ.
Եւ բռնութեամբ առաջւայ պէս լի է այն ուղին,
Ուր կռւում է աշխատանքը—դիմանում ցաւին։

Գծուծ ոսկին հեղնում է դեռ անել կարիքին,
Բռնաբարում, յագուրդ տալիս իր վայրի կրքին,
Եւ օրէնքը, որ շնչում էր մաքուր, վեհ սիրով,
Անարգւած է ու մոռացած քրքիջ ու ծաղրով։

Դու ուզում ես վերադառնալ նորից այս կեանքին,
Սիրել անվերջ, տոկալ կրկին, փարւել տանջանքին.
Ինչու... միթէ՞ նորա համար, որ լքման ժամին
Փրկութեանդ համար դիմես նորից ալիքին...

———•———

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Ողորմութիւն ես աղերսում դու ինձանից, ո՞վ թշուառ,
Ցնցոտիքդ չէ՛ էլ ծածկում մարմինդ մերկ ու նիհար.
Մաշած կուրծքդ բաց է ու մերկ, որպէս ինքը տանջանքը,
Նա իր համբ հեծեծանքով վրդովում է իմ կեանքը։

Գոնէ մի կերպ դու ապրում ես—օգնող ձեռք էլ միշտ ունես,
Իսկ կարիքի ծանր ժամին ընկերներդ կօգնեն քեզ,
Մեծատունը կարեկցաբար միշտ բարձրից է քեզ նայում,
Վիրաւորել ստրուկ ոգուն ցածութիւն է համարում։

Դու հարուստ ես, այլ ո՞չ աղքատ, լոկ քեզ այդպէս կերևի,
Ահա՛ ես եմ մուրացիկը՝ կարօտ սիրոյ, համբոյրի...
Դիշերը ցերեկ, սիրոյ ծարաւ, լուռ տանջւում եմ ես դաղտնի.
Բայց ո՞չ... դուցէ համաձայնիմ մեռնել առանց սիրելու,
Քան կորցընեմ հպարտութիւնս ու դամ ինձ սէր մուրալու։

ՇՐՏԵՐԻՑ ՄԷԿԸ

Նա եկաւ մեզ մօտ հեռու մի գիւղից,
Մայրաքաղաքի
Աղմկոտ կեանքը գերադասելով գիւղի անդորրից.
Եւ ուխտեց լինել սև աշխատանքի, զրկանքի գերին,
Յուսալով այդպէս գոնէ հասնելու իր իդէալին։

Եւ ինչպէ՞ս տուժեց... Նրան դէմ կանգնեց սառն, անտարբեր,
Գոռող, անհամբոյր մայրաքաղաքը և անհիւրասէր,
Սակայն իր մտքում նա ցնորում էր այստեղ հանդիպել
Բարի մարդկերանց ջերմ աջակցութեան և աղնիւ ապրել։

Բայց ապրել աղնիւ մեծ քաղաքներում մենակ ու անփող,
Առանց կապերի—դիւրին չէ՛ շատ էլ. ամեն տեղ ճնշող
Բռնութիւն, տանջանք, ուր պահանջում են անվերջ սողոսկալ
Մեծի ոտքի տակ, մէջքիցը ծալուել, խոնարհ գլուխ տալ...

Երկար ժամանակ նա չհանդիպեց սրտացաւ մարդկանց,
Իսկ հետը բերած քանի մի ոսկին հալուեցաւ անդարձ...
Աշխատել կուզէ—չկայ աշխատանք, մինչ սև օրերը
Ահա գրկաբաց ուզղել են խեղճին իրենց թեւերը...

—«Երանի՜ գտնեմ գէթ բարի խորհուրդ, կամ մի օգնութիւն»
Շշնջում էր մեղմ թշւառ աղջիկը շըւարած, նկուն.
«Ուր էլ նայում եմ, մարդիկ հրճւում են փարթամ, լի կեանքով,
Իսկ ես միայնակ կանգնած եմ ահա ու մեկնած ձեռքով...

Կատարուե՞ց ուրեմն... և իմ խոհերը տեսնում եմ, աւա՜ղ,
Ընդ միշտ խորտակուած,
Ագահ շիրիմն էլ բերանը բացած,
Դառն զրկանքներ հոգիս մաշեցին, մաքեցին յոյսերս,
Կարաւ ամեն ինչ... և՛ եռանդ, կորով և՛ բանելու սէր:

Եւ մահն արդէն ցցած է իմ դէմ լուռ ու անվրդով,
Շընթանամ արդեօք այն սովորական կորստեան ճամպով,
Որով գնում են ինձպէս շատերը... չերթամ վաճառել
Մարմինս չքնաղ ու գառնամատուած, թառամած կամել...*)
—«Ո՛չ... ո՛չ... և ո՛չ...»

Եւ գտան նրան անկողնում մեռած, սառած դիակով,
Արիւնը կրծքին, չորացած ու սև լերդացած վէրքով,
Եկան ծանօթներն լոկ ափսոսացին, կեղծ ցաւակցեցին,
Ոչ ծաղիկ մի կեանք այսպէս վաղանցուկ թառամեց կրկին...

Նա եկաւ մեզ մօտ հեռու մի գիւղից,
Մայրաքաղաքի
Աղմկոտ կեանքը գերադասելով գիւղի անդորրից.
Եւ ուխտեց լինել սև աշխատանքի, զրկանքի գերին
Ցուսալով այդպէս գոնէ հասնելու իր իդէալին:
—Եւ հասաւ ահա խեղճը այս օրին...

———·———

*) Մշտադալար մի ծաղիկ—փոխաբերական մտքով՝ անբարոյական կին:

ՅՈՅՍ

Թշառությունը թունաւոր խայթով
Սիրտս է շանթում ու վիրաւորում,
Բայց հենց որ խելքս կենդանի թափով
Զարթնում է նորից, ուղեղս լարում,

Սլանում է նա, որպէս փոթորիկ,
Դէպի այն ամէն վաստակեալ մարդիկ,
Որոնք յուսահատ, վհատման ժամին
Կեանքի հետ կուել, մաքառել կասին։

Որպէս սէգ արծիւ միտքս թռչում է
Բարձր ամպերից էլ աւել հեռու,
Ուսկից սարսափով մտաբերում է,
Որ վիշտը իրեն էլ չի հասնելու։

Եւ սիրտս նորից առաջւայ նման
Լցւում է յուսոյ վառ գաղափարով,
Որպէս անյաստակ ծովը անսահման,
Որ լի է անդին լալ ու զոհարով։

Եւ փայփայանքի նորից նա կարօտ,
Որոնում է կուրծք՝ իրեն ապաստան,
Եւ ողջունելով կեանքի առաւօտ՝
Զգում է սիրոյ, եղբայրսիրութեան։

ԲԵՆԻՈՐՈՒՀԻՆ

Մանում է թելը, պըտըտում արագ,
Մինչ ես տասն և ութ հասած գարունքիս՝
Ունիմ հուր աչեր, սէր ու ճախարակ,
Ապրում եմ անհոգ երգը շրթունքիս։

Ու թէ հերարձակ փողոցի միջով
Անցնում եմ մենակ օրը ցերեկով,
Տեսնողը, ասես, սիրուցը գժւած՝
Վազում է յետքէս զմայլում ինձնով։

Բայց ես ծաղրով եմ լոկ պատասխանում
Նրանց հրապուրիչ, պակշոտ խօսքերին,
«Նրա» համար եմ միայն պահպանում
Գարնան ծաղիկս—սրտիս ընկերին։

Եւ գիտէք ո՞վ է իմ սրտի սիրած՝
Դարբինը հսկայ—իր սալի նման,
Նրա քաջառողջ հասակի դիմաց
Ես երևում եմ մանուկի նման։

Երբ կրակի մօտ երկաթ է ջարդում,
Թափով դարկ տալով մէկ-մէկու հետքից,
Երբ նրա վիզը քրտինքն է պատում,
Ու կրակ ցայտում խոշոր աչքերից,

Այդ ժամ նրանով ես հպարտացած՝
Պատրաստ եմ փարուել նրա մերկ կրծքին,
Սիրել անբաժան աշխարհ մոռացած՝
Դարձընել կուռքս, ուտիրել սրտին։

Բայց, երբ իմ տանը ժամադիր եղած
Որոշուած ժամից անցնում է վայրկեան,
Որպէ՞ս տանջւում է այդ ժամ իմ հոգին,
Քաջ լինի ասես ընկած իմ կրծքին։

Յանկարծ լսում եմ դրսից ոտաձայն,
Նա շտապ-շտապ դուռը է բաղխում,
Վազում եմ առաջ, յուզւած ու անձայն՝
Դողում են ձեռքերս, սիրտս բաբախում։

Յոգնած բանելուց, մրոտ երեսով
Մանում է դարբինս ժպիտը դէմքին,
Եւ մի վայրկեանում ուժեղ թևերով
Տեսնում եմ փարուեց նա իմ լայն կրծքին...

Այդպէս միացած խոր հրճանքի մէջ
Զարկում են զոյգիս սրտերը անվերջ...

———•———

ՄՏՈՐՄՈՒՆՔ

Արի թռչենք դէպի հսկայ կատարները սարերի
Եւ թագնուենք նրանց ձիւնեայ սաւանի մէջ կուսական,
Եւ թող այնտեղ մեր հայեացքը արեգակով զմայլի,
Եւ այնտեղից ջերմ համբուրի ամպերի հետ մշտական:

Նեխուած այս մեղկ մթնոլորտից կբարձրանայ մեր հոգին,
Եւ մեր անուշ ցնորքները մինչև ասպարէզ կթռչին.
Եւ ներդաշնակ երգը սիրոյ այնտեղ էլ չի խանգարուի,
Կմոռանանք ծանրութիւնը աշխարհային մեր խաչի:

Կթարմանանք վառ, դիւթական երազների աշխարհում,
Եւ փոխադարձ բուռն սիրով ոգեորուած եթերում՝
Հսկայ, ուժեղ արծիւների թեւեր առած, որպէս յուշ,
Կսլանանք դէպի այն կողմ, ուր ծագում է արշալոյս:

Մինչդեռ այս մեղկ, ստոր վայրում սուրբ երկնքին մենք կարօտ,
Բարձր սիրոյ, վեհ զգացմանց կմնանք միշտ անծանօթ.
Ո՛չ. դէպ ձիւնեայ գագաթները եկ միասին սլանանք,
Կեանքի և մեր սիրոյ այժը այնտեղ միայն կիմանանք:

———

ՔԱՋԱԼԵՐԻԱԾ ԲՆՈՒԹԻՒՆ

Երբ որ երկիրը նիրհում է խաղաղ, կախարդուած քնով,
Եւ Արարիչը երկինքն է վառում գոհար աստղերով,
Երբոր խանդավառ համբոյրը սիրոյ ողջ թեւաւորուած՝
Դէպ երկնայինը ձգտելու յուսով ընկնում է պղծուած,
Գիտեմ ես, աւա՜ղ, որ այդ դիւթական, հանգստեան ժամին
Սէրն ու վաստակը ցաւով, տագնապով շատ վէրքեր տարին,
Եւ գիտեմ անշուշտ, որ հրեշտակները կբուժեն խմբով
Այդ թարմ վէրքերը, իսկ ծաղիկները թախծալի երգով
Պիտի լանան ջերմ, անուշաբոյր իրենց արցունքով:

* * *

Բայց երբ երկինքը սարսում է, դողում ամպի ճայթիւնից,
Եւ անտառները ճչում են ահեղ փոթորիկներից,
Երբ հորիզոնը արիւնի ներկուած՝ հրդեհի նման
Սիրտ է մթացնում, աչքեր պղտորում հեւուից անսահման,
Գիտեմ՝ տարերքի այդ խորհրդաւոր ցասման վայրկեանին
Սէրն ու վաստակը խիստ անարգուեցին, և գիշերային
Ճնշող խաւարը տանջում է նրանց դաժան բանտերում,
Ապատ, վեհ հոգու և խղճի վրայ կոպիտ բռնանում...

Եւ նորից ճնշած, նեաւելով գիրկը յուսահատութեան՝
Մտածումեմ ես՝ կտեսնե՞մ արդեօք նորից մի անգամ
Ազատ արևը ինձ փայփայելիս, և թւում է թէ
Վերջապէս մի օր փրկարար ոգին բանականութեան
Պիտի վերջ դնի մարդկանց կրկնւող հառաչանքներին—
Ընդ միշտ յաւիտեան։

———•———

ՆՈՐ ՍԷՐ

.....Եթէ սիրում ես, տուր ինձ քո ձեռքը,
Երթանք միասին փչոտ ուղիով,
Թշւառ ամբոխի արցունքն ու վէրքը
Կրենք մեր սրտում, տանենք երկուսով։

Օ՜, իմ վարդերը քեզ են պատկանում,
Որ սնուցել եմ եմ ծածուկ վայրերում.
Արցունքն է նրանց ջրել գիշերով,
Ջգայուն սիրտս ջերմացրել սիրով։

Դէպի թոյլերը ուրեմն գնանք,
Նրանց նւիրենք մեր ծաղիկները,
Թող մեզ հարազատ, սիրելի դառնան
Այդ թշւառների կացարանները։

Մթին որջերը, խոնաւ հիւղերը
Թող մեզ ծառայեն որպէս տաք կողինք,
Խեղճ, բաղմաչարչար հալածւածները
Երկուսիս թող մի կաղմեն ընտանիք։

Ահա իմ ուխտը յաւիտենական—
Նրան չայել եմ իմ տանջած կրծքում.
Ոյժերս մատաղ, սէրս կուսական
Եղբօրս նէր թողնել այս կեանքում։

Դէ, տուր ինձ ձեռքդ, թեանցուկ շուտով
Գնանք ճանապարհ, մեզ հետ է Աստուած,
Զոյգով տարած խաչն կլինի թեթև,
Կերթանք անվրդով, վստահ, սրտաբաց։

Մենք հոգով նման՝ գաղափարակից—
Ահա թէ ինչու ես քեզ սիրեցի.
Տանենք աշխարհիս և՛ ցաւ և՛ կսկիծ,
Զոհենք ամբոխին, թող նա գոհ լինի։

Եւ թող որ մեռնինք կիսաճանապարհ,
Թող թէ սուրը գործը մնար չաւարտած,
Փոյթ չէ, Աստծոյ մեծ դահի առաջ
Աստղի պէս կմնանք պարզերես կանգնած։

Մեր սէրը վառած՝ ծաւալ կստանայ,
Կլուսաւորի ստոր աշխարհը,
Եւ երկրիս վրա օրէնք կդառնայ—
Սիրել ու ներել թշառ եղբօրը։

———•———

ՑԱՂԹԻԱԾՆԵՐԸ

Ահա բիւրաւոր մի շարք խեղճերի,
Նրանց ծայրերը չեն էլ երևում...
Լսում է բողոք տանջած սրտերի,
Նրանց հոգու մէջ մռայլն է տիրում։

Անցնում են ահա կոր ու մերկացած՝
Հողմերի միջից ծով—գլուխներով.
Նրանց դէմքերը տխուր դալկացած՝
Աչքերը լցած արտասուքներով։

Եւ աղմկայոյզ, ծովի պէս փրփրած,
Շուրջս պատել են հսկայ օղակով,
Նրանց երեսը կարծես դրոշմած
Լինեն վշտերի անջինջ կնիքով։

Լսում եմ խռպոտ շնչառութիւնը
Եւ հառաչանքը մաշած սրտերի.
Շուրջս տիրել է թշառութիւնը,
Անէծք ու լացը հալածուածների։

—«Եկել ենք ահա քեզ մօտ, նազելի,
Մեր մութը, խոնաւ, սառած որջերից,
Կրելով խաչը ծանր հոգսերի,
Յոգնել ենք կեանքի մաքառումներից։

Սովից սոխլաւած՝ ահա իջել ենք,
Սրիկաների թագստեան տեղից.
Ամօթ, նախատինք մենք մոռացել ենք,
Վանելով ահը մեռած սրտերից։

Շատ որոնեցինք մենք իդէալը,
Սակայն չգտանք նրա գէթ փայլը,
Սէրն էլ մեր սրտում մեռաւ այդ օրից,
Արդարութիւնը չքացաւ երկրից։

Մենք աշխատանքի դուռը բաղխեցինք
Մեր հայրենիքի ամեն խորշերում,
Զգտանք, չկար ու մենք մնացինք
Յաղթուած կարիքի գիշող ճանկերում։

Մինչդեռ ժպտալից հրաշալի փայլով
Աստղն է փայլում երկնակամարում,
Ու եռանդագին մեզ կոչ անելով,
Սուրբ աշխատանքը նա փառաբանում։

Մերենաները մի տեղ ազմկում,
Այլ տեղ սուլիչն է գոռում, դղրդում,
Եւ գործարանի ծխնելոյզները
Երկինք են ցցել լայն բերանները։

Մինչ գործարանի մութ կամարների
Եւ անիւների խուլ ժխորի մէջ
Մաշւում է թոքը աշխատաւորի,
Նրա սև օրին չի հասնում մի վերջ։

Օ՜, ինչպէս ուրախ բաղդաւոր ու կուշտ
Ապրում են մարդիկ, խնամող Աստուած.
Նրանք ողջ կեանքում չեն սովել անշուշտ,
Նրանք ողջ կեանքում չեն էլ արտասուած։

Ուրեմն մենք ենք աւելորդ ծնուած,
Կեանքի խնջոյքում մեզ բաժին չկայ.
Օ, երանի՜ թէ այս թշուառ, խամրած
Կեանքը ջախջախուէր սարի տակ հսկայ։

Մեր շուրջը խաւար, մենք լոյսի կարօտ,
Բաղդի անողոք հարուածների տակ,
Մենք քայքայւում ենք ահա անբողոք,
Որպէս սոսկ յաղթուած սարուկների շարք...

———•———

ՄԵՐԹԻՐԱԾՆԵՐԻՆ

Դուք պատանիներ, թառամած, յոգնած ձեր հայեացքներում
Վառւում է հուրը վաւաշոտութեան, բայց ինձ չի այրում,
Թէ սիրէի ձեզ, ամօթ կդգայիք ձեր թոյլ համբոյրից,
Անզուսպ, վառ սէրը և պատժող սուսերը և վահան է ինձ։

Հեռացէք ինձնից, դուք անարժան էք կուսական ծաղկի,
Չէք կարող սիրել, ոչ պաշտել անկեղծ մաքուր էակի.
Դէհ, պաշտպանուեցէք, թէ չէ կանպատւենք մեր թոյն խօսքերով,
Ձեզ համար մի յոյս, մի աստղ կայ լոկ փայլելիս սիրով։

Անձնավաճառման այդ աստղն է կոյր ու սև վիճակի,
Աստղը բռնութեան, կամ դժբաղդացած կնոջ ամօթի.
Նա ձեզ կսիրի միառժամանակ և փողի համար,
Մինչ որ կարիքը կխղճայ նրան մի օր անպատճառ։

———•———

ՁԵ՛Զ, Ո՞Վ ՀԱԼԱԾԻԾ ԲԱՂԻ ՁԱՒԱԿՆԵՐ

Ձեզ, ո՞վ հալածուած բաղդի զաւակներ,
Որ աշխատում էք
Խուլ, աղմկալի կամարների տակ զործարանների,
Որ հառաչում էք մթին շերտերում լեռնահանքերի—
Ձեզ, ով թշուառներ, ողջո՞յն եմ բերում,
Եւ սուրբ վաստակը ձեր փառաբանում։

Այնտեղ անտառի զով թաւուտներում,
Ուր թռչուններն են երգում խմբովին,
Ուր ձորակի մէջ առուն է փայլում, աշխոյժ գալարում,
Ուր օրօրում է զեփիւռի շնչով կանաչ մրտենին—
Այնտեղ պսակուած ծաղկանց փնջերով
Կենսատու արևն եմ փառաբանում։

Եւ ո՞վ է կարող զսպել ընթացքը լեռնավտակի,
Աղատ թռիչքը երկինք սլացող ժիր ծիծեռնակի.
Այն ով է կարող արգելել թափը թռչող սլաքի,
Որ սլանում է դէպի խոր ծովը կապոյտ երկնքի—
Նեսի, թռչունի, վտակի պէս էլ
Երկինք է ձգտում հոգիս անարգել։

Քեզ եմ ես պաշտում, օ՜, սուրբ գեղարուեստ, խորին հաւատով,
Եւ մարտնչում եմ անունիդ համար արիւնոտ սրտով,
Աղնիւ զգացմանց խանդավառութեամբ ահա ձգտում եմ
Գաղափարների վեհ իրագործման և ես հիւսում եմ
Փշախառ ծաղկից իմ ազատ երգիր,
Որ բերեմ թշւառ եղբօրս նւէր։

ՑԱՆԿ

		Երես.
I	Ադա Նեգրի Քննադատական տեսութիւն	3
1	Աշխատե՞լ ես դու	15
2	Հեթանոսական համբոյր	17
3	Ճակատագիր	18
4	Ողջոյն քեզ կարիք	20
5	Դժբաղդը	23
6	Կէս գիշերին	24
7	Դանակի տակ	25
8	Հանգիստ վստակաւորին	28
9	Մաղթանք	30
10	Թառամած համբոյր	31
11	Փողոցի տղան	32
12	Անիւի տակ	34
13	Սիրոյ անէծք	36
14	Թիթեղագործի մահը	37
15	Ջրահեղձ կոյսին	39
16	Մուրացիկը	40
17	Ճատերից մէկը	41
18	Ցոյս	44
19	Բանտարուհին	46
20	Մտրմունք	48
21	Քաջալերած ընութիւն	49
22	Նոր սէր	51
23	Ցաղթուածները	53
24	Մերժուածներին	56
25	Քեզ, ով հալածուած բաղդի զաւակներ	57

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Էջ		
15	11	տպւած է	պիտի լինի
23	15	հրատարակութիւնից	գլխոյկից
26	14	անբիծ	ամբիծ
28	12	հայեածքդ	հայեացքդ
51	6	և	ես
		եմ եմ	եմ

ՀՀ Ազգային գրադարան
NL0311146

8135

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Բանաստեղծութիւնները

Ց. ՑԱԿՈԲԵԱՆԻ . . . . . 30 Կ.

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.



Ցանկացողները կարող են դիմել՝
Թիֆլիսի և Բագի—բոլոր գրավաճառներին.
Կամ թարգմանչին այս հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. домъ № 43. А. Акопяну.